

RECEIVED
13.5
1-2

THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿԱՆԵՐԸ ԲԱԾ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒ:

ՇԱԲԱԹԱԹԵՐՈՒ

ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 24

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱԲԱԹ, ԱՊՐԻՆ 23, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆՏ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Պատերազմ, պատերազմ, պատերազմ... Այս է ընդհանուր աղաղակը: Յաղթութեան ու փառքի արևը քիչ օրէն պիտի ծագի Ամերիկայի համար: Ծեր Ընթըլ Սամբըսն սարեկան երիտարարի մը նման՝ քաջութեամբ ու աշխոյժութեամբ կ'սկսի գործի: Կը տարածէ նա իւր ուժեղ բազուկները դէպի չարչարուած Բուսան: Անգուժ Սպանիացին զայն տեսնելուն պէս պիտի ծալէ դաշինքի գրոշակը, ու ծոցը պահելով պիտի վերադառնայ Եւրոպայ: Ուր որ տկար ու ճնշուած կայ, հոն է իրաւունք. և ուր որ իրաւունք, հոն է յաղթութիւն: Հայաստանի կոտորածներէն վերջ ցաւ ի սիրտ համոզուեցանք թէ իրաւունք բազը աշխարհէ վերցուած ու անոր սեղը ոյժ բազը դուռն էր:

Շահախնդիր Եւրոպական Տէրութիւնները ձգեցին որ բարբարոսութիւնը ճգնէ ինքն իրենք, և իրենք ալ Պիղատոսին պէս ձեռքերնին լուսացին: Եւ ոմանք ալ զմեզ խաչել ուղեցին: Այո՛, արդարութիւնը և իրաւունքը կը խաչուին, սակայն չեն Բեռնի, այլ օր մը յարութիւն կառնեն: Այս յարութեան մէջ զերեզմանի քար վերցնող Հրեշտակը Ընթըլ Սամբըսը և Ամեն պատիւ ու փառք ազգի մը, որ յանուն ճնշուած արդարութեան արիւն կը թափէ:

Բոնիդէսը քուէարկեց Բուսայի անկախութիւնը: Այս որոշումով Բոնիդէսը կը պահանջէ Նախագահէն որ անմիջապէս իմացնէ Սպանիոյ որ Բուսայէն յաւէտ քաջուի: Նախագահն ալ ստորագրեց այս որոշումը. և Չորեքշաբթի օր վերջնազիր մը դրկեց Սպանիոյ, ծանուցանելով թէ եթէ 48 ժամէն Սպանիական կառավարութիւնը չը հեռանայ Բուսայէն՝ Մ. Ն. կառավարութիւնը զինու զօրութեամբ պիտի հեռացնէ զինքը անկէ: Տարակոյս չը կայ թէ Սպանիոյ պիտի մերժէ այս պահանջը, և անմիջապէս պատերազմ կը հրատարակուի:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ուաշինգթընի Սպանիական Դեսպանը անցազիրը առնելով Բանաստայ մեկնեցաւ: Մատրիտի Ամերիկեան Դեսպանը ալ Գաղղիայ գնաց:

— Լոնտոնէ կը հեռագրեն թէ Անգղիոյ կուղէ դաշնակցի Մ. Նահանգացի կնա:

— Սպանիական 14 մարտանուեր Բէյթի Տը վարտ կողմէն մեկնեցան չի գիտցուելը գէպի ո՛ր կողմ: Ոմանք կը կարծեն թէ նաւատորմի թիւ պայ պիտի երթայ, իսկ շատեր ալ կը հաւատան թէ այս նաւերը 8—10 օրէն Նիւ Եորքը պիտի ուժակոծեն:

— Մալակայի մէջ Սպանիական ամբողջ Ամերիկեան Հիւպատոսարանը յարձակած ու Հիւպատոսի սպասուողը սպանած է:

— Մ. Նահանգացի ծովային զօրութիւնը կը բազկանայ այժմ 68 այլ

և այլ կարգի զբազաններէ, թորփէտու և թորփէտու որսացող նաւերէ: Ասոնք ամենը կը կրեն 424 թնդանօթ. 6250 նաւաստի և պաշտօնեայ: Երկու ամիս առաջ Ընթըլ Սամբըսն ծովային ոյժը հաղիւ այժմեանին կէսին չափ կը հաշուէր:

— Սպանիայ մտաւորապէս 50 նաւեր ունի. ստոնց սառնիները են Վիսքայա և Բարլոս Երդ: Սպանիայ ամենէն շատ թորփէտու որսացողներ ունի: Մինչդեռ Մ. Նահանգացի նաւատորմի զին մէջ միայն մէկ հատ կայ այս սեսուէր:

— Փորթո Րիքօի մէջ յեղափոխութիւն ծագած է տեղւոյն Սպանիական կառավարութեան դէմ:

— Վոլ Սթրիթի դրամատէրերն 1042 անձերէ բազկացնալ կամաւորներու գունդ մը կազմած են: Իրենց մէջ \$100 000 հանգանակած են ծախուց կամար:

— Մ. Նահանգացի կանոնաւոր Բանակը երեք օրի մէջ Հարաւ պիտի հասնի ու հոն կեդրոնանայ:

— Սպանիական Դեսպանը Մ. Նահանգացի մէջ դանուող Սպանիացիներն Հազմայն փոխադրել կուտայ: Պատերազմական նախարարը Բոնիդէսէն հրաման խնդրած է կանոնաւոր Բանակին վրայ 17000 մարդ ևս աւելցնելու:

— Նախագահը 80 հազար կամաւոր ի զէն կոչած է, և մօտ օրերս 400 հազար ևս պիտի կոչէ, որոց մէկ մասը ծովեզրեայ քաղաքները պաշտպանելու պիտի երթայ. մաս մալ Բուսայ պիտի զրկուի:

— Պատերազմական ծրագրի մի մասն պիտի ըլլայ հարիւր հազար զինուոր Սպանիայ զրկել ձէնէրալ Մալսի հրամանի տակ:

— Պատերազմին համար ամիսը 100 միլիոն տոլար ծախք պիտի ըլլայ: Նախագահը հինգ հարիւր միլիոն տոլարի վարկ մը խնդրած է:

— Սպանիական Փորլումէնթը բացուեցաւ անցեալ Չորեքշաբթի օր, ու չուժեց Մաք Բինլիի պահանջները ընդունիլ:

— Սպանիոյ կառավարութիւնը բոլոր Սպանիացիները զէնքի կանչեց, իրենց իրաւունքները պաշտպանելու համար: Սպանիացուց ընդհանուր աղաղակն է «մատ մը տեղ չի կորսնցունել»: Գաղղիացիներն ալ այսպէս կըսէին երբ ժուլ Ֆէլլըր Պիզմարքի հետ տեսնուեցաւ ի Ֆէրրէր:

— Լոնտոնէն կը հեռագրեն թէ Հարաւային Ամերիկայի բոլոր աէրութիւնները Սպանիոյ կը համարին:

— Բրիտանական կառավարութիւն ինչպէս նաև ուրիշներ ածուխը պատերազմական պիտոյք մը սեպելով՝ պատերազմող աղջաց զբահանաւներուն պիտի մերժեն ամենամերձ բարեկամ նաւահանգիստ մը երթալու համար պէտք եղածէն աւելի ածուխ տալ: Սպանիոյ համար մեծ հարուած մէջ այս, վասն զի Տոնըր Բէյթի վէրտի կղզիներէ զատ ուրիշ տեղ մը

չի պիտի ունենան այս կողմերն ածուխ առնելու համար: Կըսուի թէ Ընթըլ Սամբըսը զբահանաւք պիտի աշխատին զբաւել այս կղզիները:

— Լիվըրփուլէն Պովիք շոգենաւը ճամբայ ելաւ քաղաքս դալու համար: Սա նաւուն մէջ կան բազմաթիւ Լի Մէտֆըրտի հրացաններ, 50 Գրուփի և 10 Մաքսիմի արագ կրակող թնդանօթներ և 200 թօնօ ռազմամթերք բանակին համար:

— Սպանիական արժեթուղթերը Փետր. 14էն ի վեր 26 աստիճան վար ինկած են: Ամերիկեաններու վրայ զգույն փոփոխութիւն մը եղած չէ դեռ:

— Ամէրիքըն Լայն շոգենաւային ընկերութեան շարք մեծ շոգենաւերը կառավարութեան տրամադրութեան տակ դրուեցան: Սոցա երկուքը Ֆիլատէլֆիա զրկուեցան զբահանաւքուուերու համար. միւս երկուքը քիչ օրէն Եւրոպայէ կը հասնին:

— Սպանիոյ խնդրանք մեծ տէրութիւնք խորհեցան նաւային ցոյց մընելով քաղաքիս առջև՝ ճնշում բանցնել Ուաշինգթընի կառավարութեան վրայ, ըսյց Մեծն Բրիտանիայ և Ռուսիա մերժեցին համակերպիլ: Սա կը նշանակէ թէ Եւրոպայ չէզոք պիտի մնայ—գէթ առ այժմ— ինչպէս որ մնաց թուրք-Հէլէն պատերազմի ժամանակ:

— Ձէնէրալ Մալսը ըսած է թէ պատերազմը չի պիտի վերջանայ լոկ Սպանիական զօրքերն Բուսայէն վանելով: Զօրավարը կը կարծէ թէ մինչև Սպանիայ երթալ հարկ պիտի ըլլայ:

— Մովակալ Սամսընի հրամայուեցաւ Բուսայն պաշարիլ:

— Մովակալ Շըլլէրի նաւատորմի զինքնաւ այս կողմը եկող Սրանիական նաւատորմի շարքն առնելու:

— Ֆիլատէլֆիաէն լուր կը տրուի թէ Բրիտանական Համախոսէտ շոգենաւը, որ Նորֆոք նաւահանգիստէն Բէյթի վէրտ պիտի երթար անցեալ օր՝ Սրանիական կառավարութեան համար 3000 թօնօ ածուխ տոնելով իր հետ, Ուաշինգթընի կառավարութեան կողմէ գնուած է ածուխին հետ միասին:

— Հօլանտ անուն ամերիկացիի մը նոր հնարած ընդ ծովայն թորփիլանաւը, որ ոչ միայն ի հարկին կելեւը՝ ըստ հաճոյս իւր պետին, այլ և կը ճամբորդէ ջուրին տակէն փափաքուած ուղղութեամբ, անցեալ օր Մովային նախարարութեան կողմէ կարգեալ յանձնարարի մը ներկայութեամբ փորձուեցաւ ձէրզիլ բացերը: Շոգենաւը, իւր մէջ ունենալով հինգ պաշտօնեաներ ու իր հնարիչը, Մր. Հօլանտ, մէկ ժամէն աւելի ջուրին տակէն ճամբորդեց, քանի մը անգամ աննշմարելի եղանակաւ մը ջուրին երեսը երկելով ու ծովասոյզելով նորէն: Փորձերը վերջանալով առաջ օգնային կեղծ թորփիլ մըն ալ արձակեց: Մովային պաշտօնեայք մեծ արդիւնք կսպասեն այս գիւտէն: Մր.

Հօլանտ պատէճ ժամանակին օգնութեան եկաւ Ընթըլ Սամբըսն ծովային զօրութեան:

— Մատրիտի կառավարութիւնը Մաքսիլիի վերջնազիրը պատերազմի հրատարակութեան նշան նկատած է:

— Նախարարներէն մին ըսած է թէ առաջին ճակատամարտը այսօր ովկիանոսին վրայ տեղի պիտի ունենայ:

— Ուաշինգթընի կառավարութիւնը արգիլեց վաճառականներուն Սպանիոյ ածուխ վաճառելը:

— Թղթատարական նախարարը հրատարած է պատերազմի հակառակ ըլլալուն համար:

— Մատրիտի ամբողջ ցոյցերու մէջ է: Ընթըլ Սամբըսն զինքն մը վար քաջած է ամբողջ ու կոտորած է զայն:

— Ռօշիլտենբուր ֓արիզի տունը ծանուցազրով մը առնելիքները կը պահանջէ Սպանիայէ: Գէլ տոնն:

— Փարիզի մէջ ի նպաստ Սպանիոյ բաժանորդագրութիւն մը սկսած է, որոյ արդիւնքը կը կարծուի թէ մեծ պիտի ըլլայ:

— Հուայթ Հավըրի մէջ, ի Ուաշինգթըն, տարիկանութիւնը սինամիթ պարունակող տուփ մը գտաւ անցեալ օր:

— Բաղաքիս մէջ հրատարակուած սրանիքէն միակ օրաթերթը երէկ դադարեցաւ հրատարակութենէ: Կըսուի թէ Բանաստայի մէջ պիտի սկսի լոյս տեսնել մինչև որ պատերազմը ըլլայ:

— Եւրոպական մամուլը, մանաւանդ Գաղղիականը, ծանր լեզու կը գործածէ Ուաշինգթընի կառավարութեան դէմ, կարծելով թէ այս վերջինս նպատակ ունի Բուսայն միացնել իրեն:

— Վերջի պահուս առնուած հեռագիր մը կըսէ թէ Ընթըլ Սամ 3 Չինական մարտանաւեր գնած է:

— Սպանիացիք սկսած են յուսահատիլ: Կըսուի թէ ստոնք այժմէն սկսած են ըսել թէ պատերազմը եթէ կորսնցնելու ըլլան՝ պատճառն ուրիշ բան մը եղած չի պիտի ըլլայ եթէ ոչ բաւական ածուխ ամբարած չըլլալին ի Հավանայ:

— Կարմիր Նաշի Ընկերութեան Պաշտօնեաներն հազար թօնօ պաշարով ճամբայ կենն վաղը Հավանայ երթալու համար: Բարա Պարթըն, որ կոտորածներէ վերջ Հայաստան գնացած էր, աս երկոյ քաղաքէս Բի Ուէսթ մեկնեցաւ, անկէ Հավանայ երթալու համար:

— Կառավարութիւնն մտադիր է պայտիքը ընդերս երկուքական տուրտարեկան տուրք մը առնել պատերազմական:

ԶՈՒԱՐ ԾԱԼԻՔ

— Պ. Սոհարար, ինչ կընեն.
— Բրտայ ջարդել կը սորուիմ, որպէս զի կուրի երթամ:

ՍՈՒՆ



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի մինչև Շաբաթ օրեր, ՏԻԳԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ: Յ. ՂԱՒԻՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Տրամական	Տր. Սթ.	Տարեկան	10 ֆրանք.
Վեցամսեայ	1 50	Բաժանորդագրին կԱՆՆԻԿ վճարելի է միշտ:	
Շամասեայ	75		
	40		

Մտար կամ նամակ ուղղել հետևեալ հասցէին: To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City

Entered at the Post Office at New York as Second Class Mail Matter.

ՆՈՒ ԵՆՈՒՔ, ՇԱՐԱԹ, ԱՊՐԻԼ 23 1898.

Ա. Ձ. Գ.

Հրատարակչական կողմից և ծանուցանել թէ այսուհետև Ազգ. ծանուցումները ձրի չի պիտի կրնանք հրատարակել: Փոքր զին մը որոշուած է այս կարգի յայտարարութեանց համար:

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Պատերազմը չսկսած անոր ազդեցութիւնն սկսած է զգալի դառնալ երկրի ազգայնական գաղափարները: Ընդհանուր գործերը սկսած են դարձիլ առևտուր ու վաճառականութիւն վնասուած են մամն կողմ. գործարանատիրարը կը պատրաստուին իրենց գործարաններն փակել, վասնզի շուկային վրայ գրեթէ պահանջ չը կայ իրենց արտադրութեանց համար: Եւ իրաց այս վիճակը գէշ էն յուսեցոյնի պիտի երթայ անուշտ երբ առաջին թնդանութիւնն իրական պատերազմը բերէ մեզ: Ժողովրդի մէջ այդ պարագայի տակ ո՞վ պիտի վնասէ աւելի:

Արդարեւ աղքատն ու գործաւորն ոչինչ ունին կորսնցընելու: «Գործորդի» քարէն ոչինչ կը տանի» կըսեն, բայց մեծատուններն ու գրամատեններն պիտի վնասեն ըստ երեւոյթին, կամ լաւ ևս է ըսել չի պիտի կրնան շահիլ այնչափ որչափ պիտի շահէին խաղաղութեան ժամանակ: Եւ ահա այս է հարուստի վնասը, գոր սակայն պիտի կրնայ դարձանել պատերազմի վերջ: Սակայն գործաւոր գաղափարը, որ իր բազմազան միայն ունի օրակազմի մը ճարտար համար, արդէն շունչացած չի պիտի կրնայ թէ կը կորսնցնել, բայց ի հարկէ պիտի տառապի չարաչար: Եւ չոր հացի փըշրանքի մը համար գործ մը չի պիտի կարողանայ ձեռք ձգել, զի պահանջը շատ քիչ պիտի ըլլայ Ամերիկեան հրապարակին վրայ: Եւ ահա այս գաղափարն է որ պիտի կորսնցնէ ու վնասէ՝ բառին բովանդակ նշանակութեամբ:

Յառաջիկայ պատերազմը, որ գուցէ հրատարակուած ըլլայ այս տողերն մամուլը զրկուած աստի, կը կարծուի թէ տարիներ պիտի տանէ՝ եթէ Եւրոպական ձեռքեր զայն աշխատին առաջ տանիլ երկուստէ: Անկարելի է նկարագրել այն վիճակը որուն պիտի ենթարկուի գործաւորը այդ անտանելի պարագային տակ: Դրամատէրն ո՞չ միայն կարող է բազում տարիներ դիմանալ ու ապրիլ իր ընտանեացիներ, այլ կարող է նաև իր դրամն շահագործել Բանաստեղծի մէջ: Կրնայ հոն գործ և առևտուր հաստատուել շահելու համար: Եւրոպան ո՞ր է պարագայի տակ իր գոնեւրըն չի գոցեր Եանքի դրամատի, ո՞ր առջև այս վերջնոյն հարստութիւնը կրնայ չոն ևս ընթացիկ ասպարէզ գտնել ու շահագործուիլ իր տիրոջ փորձամ ապրուստը ապահովելու համար: Բայց ինչ կրնայ գործաւորը ընել՝ երբ գործարանին դռներն փակուած ըլլան ու մեքենաներն անշարժ: Եւ իր բազմազան միայն կրնայ վստահիլ իր գաւազան օրակազմի կողմէն: Գիտեն երկիրն, անոր ժողովուրդն ու լեզուն. բայց մենք՝ ընդհանրապէս՝ ասոնց և ոչ մին ունինք. ո՞չ դրամագրուիս, ո՞չ հարստութիւն և ոչ ուրիշ պատահականութիւն մը՝ կերպով մը՝ մեր ապրուստը ապահովելու՝ անգործութեան ժամանակի մէջ: Եւ ինչ ընելու ենք:

Արդարեւ անկարելի է գոհացուցիչ լուծում մը կամ պատասխան մը տալ այս հարցին. ամեն անհատ իրեն լա-

ւազոյն թուած կերպով միայն կրնայ լուծել զայն: Բայց իր թելադրութիւն ըսելու ենք թէ պմեն Հայ — գործաւորները մանաւանդ — ամեն հաւանականութեանց դէմ կուրելու պատրաստ դրից մէջ գտնուելու են: Այն որ քիչ շատ դրամ ունի, կրնայ գոնէ անոր վստահիլ. բայց անոնք որք իրենց քրտանց օրական արգեանց միայն կը վստահին, մեղ կը թուի թէ՛ ի հարկին՝ պատրաստ ըլլալու են հեռանալ մեծ քաղաքներէ, ու ներսերը ապաստանիլ: Հոն երկրագործ ժողովուրդի մէջ աւելի հաւանական է ապրուստ մը գտնել: Երկրագործին առևտուրը Աստուծոյ հետ է. պատերազմը զայն չի պիտի կրնայ կեցնել:

Չարմացմամբ կը լսենք սակայն թէ ոմանք՝ անօթութեանէ չի մեղնելու համար՝ որոշած են կամաւոր երթալ: Սոսկալի սխալ մէջ այս: Ոչ թէ որովհետեւ այդ քայլ դրամով կեանք վաճառել կը նշանակէ, այլ որովհետեւ կարելի չէ մտածել թէ ամեն անօթի Հայ պիտի յաջողի կամաւոր ընդունուիլ՝ փորը կշտացնելու համար:

Այն Հայը որ հացի համար մեռնիլ յանձն կ'առնէ, շատ զնահատելի գործ մ'ըրած կըլլայ եթէ Հայրենիք վերագտնայ ու հոն մեռնի: Հոն գուցէ իր մահը հացէն շատ աւելի արժէքաւոր բան մը կրնայ յառաջ բերել: . . .

* * *

Ուրախ ենք լսել թէ՛ մեր անցեալ շարժումն ըրած գիտողութիւններէ վերջ՝ քանի մը պահակ խուճերու վերաբերող Հայեր իրենց Գնդապետներուն դիմած ու իրենց բացակայութեան համար ներողութիւն խնդրած են. կը յուսանք որ միւսներն ալ իրենց այս ընկերներու օրինակին պիտի հետնին, և առիթ չի պիտի տան սեղական մամուլն այս առթիւ յարձակիլ Հայոց դէմ:

Գիտնալու է թէ «Միլիշիան» Մ. Նահանգաց կանոնաւոր բանակը չէ. և ստիպեալ չէ երբէք երկրէն դուրս կըսուելու երթալ: Ասոնց պարտականութիւնն է երկիրը պաշտպանել թշնամիին դէմ: Եւ ամեն քաղաքացի պարտաւոր է ի հարկին իր տունը պաշտպանել՝ երբ թշնամին գայ քանդել զայն: Ուստի «Միլիշիան» մեր այս Հայ անդամներն պէտք չունին վախնալ. զի պարզ քաղաքացիներէ քիչ աւելի վտանգաւոր պաշտօն մը ստանձնած պիտի ըլլան պատերազմի ժամանակ: Բայց մոռնալու չէ թէ զատուիք ըլլալու մեռնելէ շատ աւելի ծանր է մարդու համար: Հ. Է.

— — — — —

Ո՞՞՞ ՍՏԻՊՈՒԱՄ Է ՉԻՆՈՒՈՐ ԸՂԼԱԼ

Միացեալ Նահանգաց օրէնքը, որպէս կը կարծեն մեզմէ շատեր, պատերազմի ժամանակ չի կրնար ամեն քաղաքացի ստիպմամբ զինու տակ կանչել: Անոնք որոց տարիքը 18 է վար և 45 է վեր է զինուոր չեն կրնար ընդունուիլ. անոնք որք ընտանիքի մը միակ զուգին են կամ ընտանիքի մը ապրուստը ճարող միակ անձերը են, ազատ են զինուորական պարտականութենէ: Եւ մանապէս ստիպուած չեն զինուոր լինիլ անոնք որք ուրիշ անգամ արդէն ծառայած են երկիրն, և կամ Ֆիզիքական պահանջուած կազմութիւնը չունին. այսպիսիներն, ինչպէս նաև օտար երկրի հպատակներն կրնան միայն կամաւոր գրուիլ, եթէ կը փափաքին կուրիլ աստեղագաղթ դրօշակին համար:

— — — — —

ԱՁԻԵՐ

Նիւ Եորքի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը հարկ կը համարի իմացնել տարբեր նահանգներու ու հեռավոր քաղաքներու Հայ ազգայիններուն որ իրենց մէջ գտնուող կարօտեալները Նիւ Եորք Ընկերութեան չի զրկեն որ և է օգնութիւն մը խնդրելու համար:

Քաղաքիս Բարեգործական Ընկերութիւնը միայն իւր մասնաւոր շրջանին համար է պատրաստուած. ու չի լինելով ընդհանուր գաղթականական մի կազմակերպութիւն՝ անկարող պիտի լինի օգնել զուրաշէն եկողներուն:

Ի դիմաց Բարեգործական Ընկերութեան

Ատենապետ Ստենադպիր Յ. Հայկունի Ա. Մ. Շիլմանեան

Վաղը Նոր կիրակիի առթիւ՝ հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի Ս. Ոսկերբան եկեղեցւոյն մէջ: Յետ Պատարագի Արժ. Տ. Ս. Ս. Վարդ. պիտի քարոզէ: Ամեն Հայ կը հրաւիրուի ներկայ գտնուիլ: Ապրիլ 23, Նիւ Եորք. Ազգ. Հոգաբարձութիւն

Դպրաց դասը կը ծանուցանէ թէ՛ վերջերս կազմակերպուած է: Կիրակնօրեայ ժամերգութիւնները ամենայն ներդաշնակութեամբ պիտի կատարէ:

Վաղը երկուց Ազատ Լսարանի մէջ պիտի խօսին Տ. Հ. Արդուամանեան՝ նիւթ ունենալով «Սնհասին Դերը» և Տ. Տ. Քէլէկեան նիւթ՝ «Հայաստանի Հնութիւնները»:

Լսարանին մէջ ժամը 7ին ազգ. երգեցողութեան դաս պիտի արուի: Ապրիլ 30, Շաբաթ երկուց ժամը 7½ ին, Ե. Ք. Ը. Հոյին մէջ, (23րդ. փողոց, 4րդ. ասիւն.) ի նպաստ որբերուուն մեծ հանդէս մը պիտի տրուի Որբախնամ Տիկնանց և ազան Լըսարանի վարչութեան կողմէ: Ամեն Հայ հրաւիրեալ է ներկայ գտնուիլ:

Մ Ե Մ Հ Ա Ն Դ Է Ս

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԲԵՐՈՒՆ

«Թէ՛ ուխտազնացութիւն և թէ՛ շահ» առածին համաձայն, Հայուհեաց Որբախնամ Ընկերութիւնը և Ազատ Լսարանը միանալով՝ պատրաստուած են մեծ հանդէս մը տալու՝ ի նպաստ Հայաստանի որբերուն, ամսոյ 30 ին:

Որպէ՛ս զի հանդէսը, բացի տաշարուած վսեմ նպատակէն, ինքնին արժէ այն դրամը զոր հանդիսականք վճարելու են մուտքի տոմսերուն՝ զայն ըստ կարելւոյն շքեղ, զուարճալից ու շահեկան ընծայելու համար, երբէք ջանք ու միջոց խնայուած չէ: Հանդիսավայրի վարձքը \$50 արժող մեծ ու փառաւոր որահ մը վարձը ու՛մ է: Ներկայացուելիք դերերը և սեսարանները ընարուած ու պատրաստուած են մեծ զգուշութեամբ ու ճաշկոճ: Դերակատարներն են ընդունակ երկսեռ Ազգայիններ և Ամերիկացի համաբաւոր Օրբորդներ, որք հաճած են իրենց թանկագին ծառայութիւնները նուիրել:

Գաղով հանդիսի բուն նպատակին, չեմ գիտեր թէ արդեօք հարկ է բաւերու գիմնել՝ շարժելու այն սրտերը, որք արդէն Հայու տաք արեւնով կը բարակեն: Ինչու ամեն առջ քաղցր զգայ իր 50 սէնթը, 1—2 տարիները տալու՝ սրբմով թէ՛ քաջակէտ այսպիսի ազգօգուտ ձեռնարկութեանց աշխատողները, թէ՛ հաճոյալից հանդէս մը վայելէ և թէ՛ մեր սիրերիմ թշնամոյն սուրբն ու գնդակովը հայրազուրկ և մայրազուրկ եղած որբերը որբանոցի մը մէջ, Հայ հօր մը և մօր մը խնամոցը յանձնելու նպատակ: Ազատ Լսարանի որահին տէրը 2 հատ 1 Տօլարնոց տոմսեր գնելէ զատ՝ անցեալ աւուր սրահին ամբողջ վարձքն ալ նուիրեց Հայ որբերուն: Ինչու Հայ մը այդ Իւրանացիէն նուազ զգացում պիտի տածէ դէպի մեր որբերը, դէպի մեր ազգային յոյսերը, ու՛մ էր և փառքը:

Ինչու մեր 60,000 մերկ, անօթի և անպատապառ մնացած որբերու խնդիրը կրակոտ հարց մը չըլլայ ամեն Հայ անհատի: Ինչու մեր քանի մը սէնթերը սիրով շտապը, որպէսզի մեր թիւրաւոր նահատակներու գերեզմաններէն արձակուած այդ ազգ. զոյւթեան նորածիլ բողբոջները — մեր որբերը — հաց ու զեռնա ունենալով զանդեմ, մտաւոր զարգացում ու բարոյական ազնիւ սնունդ ալ ստանան, ու՛մ էնան, ալ ու ձախ տարածուին ոստալից ու սնորհալից: Ժողովին յոյսերով և ապագային մէջ հրեթեղ պտուղներով բարգաւաճեն մեր խոպանացած Հայրենիքը: Հազար հօգիի յիսուն սէնթերը առանձին առանձին ոչինչ բաներ են. ո՞չ զանելը կարժէ ո՞չ կորսնցնելը. սակայն երբ անոնք մէկտեղ կուգան՝ կարող կըլլան այսինչ շափ որբեր խելի թշնամուոյն գիշատիչ ճիրաններէն և յանձնել մայրական գորովալիք գրկերու, ուր պիտի սնանին, մեծնան. պիտի զօրանան՝ օր մը իրենց նահատակուած ծնողաց սրտատուչ կտակներ արտաշնչող գերեզմաններուն վրայ ազգային յուսոյ և փառաց իր կենդանի արձաններ կանգնելու:

Մեծ մարդասպանը անգամ մը Պատրիարքին բուս, «Եթէ դուք առանց օտարներու օգնութեանը չէք կրնար ձեր որբերը պահել, ձգեցէ՛ք ինձի. ես կը պահեմ գանձք... Դ՞՞ր: Գայլը մեր գաղտնակներուն հովիւ ըլլալ կուզէ: Խողխողցն անոնց Հայրերը ու մայրերը, հիմայ ալ գանձք իր գաղանկան որբը նետել կուզէ: Թողու՛նք, Հայրենակիցներ: Այս ստակալի իրականութեան առջև եթէ անսարսեր մնանք, կրնանք ներկ լինըլինքնուս: Թողու՛նք որ մեր հրեզ-

տակի պէս որբերը Սուլթանի գիրկը իյնան, Թրքական, և անոնք որ մեր ազգ. յուսոյ և փառաց կոչումը ունին, միանան գայլերու վտամակին և օր մ'ալ անոնք իրենց սուրբ ու տապարով մեր միացորդը կտորեն:

Ահաւոր իրողութիւնը ինքնին շատ պերճախօս է. և կոչում կընէ ամեն Հայու պարտաճանաչութեանը:

Տէր բոլանք մեր պարտականութիւններուն որ օր մը կարենանք տէր դառնալ մեր իրաւունքներուն:

Գ. Պ. Չիթճեմալ

Այս հանդիսի մուտքի տոմսակները կը ծախուին Հետեւեալ տեղերը. Տ. Գ. Չպուգճեան, 345 Ուսթ Պրօսուէյ:

Բոլոր Հայ. ճաշարանները: Տի Գրիսի Սի Սի Գրատուներ: Տի Գրիսի թաւառանձեան գանձապահան է այս հանդիսին:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԻ ՏԻ ԳՐԻՍԻ

Ուսթըր, Ապրիլ 21,

Անցեալ կիրակի երեկոյ Ս. Փրք-կէի սրահին մէջ «Կարմիր Հաւկիթի» հանդէս մը կատարուեցաւ: Բուսական թուով Ամերիկացիներ ալ ներկայ էին հանդիսին: Տի Գրիսի Բարակեան շատ գեղեցիկ եզանակով մը «Հայաստան» երգը կրգեց. յետոյ ատենախօսեցին Պատուիրէ Պէնէէեան, Մարգարէտեան և Փրօֆ. Պէնէէեան: Հանդէսին փայլը կ'աւելցնէին Տի Գրիսի Սի Գրատուներ, Թովմանեան և Օր. Բարակեան որ սքանչելի կերպով երգեց «Մասունք»: Կողով մը կարմիր հաւկիթ բաշխուեցաւ հանդիսականներուն:

Հայ Բողոքականներու ժողովարանին մէջ ալ գեղեցիկ քարոզով ու երգերով սօսուեցաւ Չարսիք. բայց շատ գոյթազեցուցիչ էր բեմին վրայ երգեցիկ խումբին աւաճանոր տեսնել մէկը որ ինչձ գործաւորներու արին քրտինքի գինը եղող իրենքով ձգուած՝ հազարաւոր սօյառներ իւրացուց: Կը յուսանք թէ մեր Բողոքական եղբայրները կողմէն այս սխալը: ՀԱՅԿԱՅ—ԹՈՒՍ

Փրօվիտէն, Ապրիլ 12

Չարսի Կիրակիէն Հայերս և Չիւնացիք միանալով Ամերիկացեաց հետ, մեծ հանդէս մը բրինք Պէնէէֆորնդ: Մատրան մէջ, ուր լեցուած էր երկսեռ բազմութիւն մը: Երգեցիկ խումբերէ գլխաւոր, կար երաժշտաց խումբ մը, որոյ մէջէն Փրօվիտէնի Հայ նուագաձուռաց անդամներէն Տրք. Նաճառեան, Տի Գրիսի և Թաթէտեան: Ամերիկացի բարեկամներ գովեցին մեր նոր երաժիշտները ըսելով «Հայերը եթէ կամք ունեն, ամեն բանի մէջ առաջին կրլայն»: Օտար հանդիսականները մեզմէ սորվեցան «Բրիտոսո Յարեալ Սեւեռնոյ. Օրհնեալ է Յարութիւնն Բրիտոսոյն և գոց ընկելով Յանգամ կրկնեցին զայն:

Չարսի անուստ մի քանի Հայեր, որք ամբողջ գիշերը Բաքուը պաշտած էին, բաղնիք երթալու ճանապարհին վրայ մի քանի Հրէայներու հետ կռիւի կը բռնուին: Իսրայէլի գաւազները ձեռք լաւ մը ուտելէ յետոյ օգնութեան կը կանչեն իրենց եղբայրները. մէկ վայրկեանէն 400 հաստ կը հանին. բայց 400 հաստ 4 Հայերու չեն կրնար յաղթել: Հրէաները սուտիկանութեան դիմեցին: Այսօր Հայ Հերոսները \$8.60 տուգանք տարով ազատեցան

ՄԱՆՐԱՆՈՒՐ

Քանի մը արբանիներ անցեալ երեկոյ Յրդ. Կարմիրի վրայ Պ. Յովհաննէս Բաքալ անուն Հայ երիտա-

սորդը Սպանիացի կարծելով բռնցակոծեր են:

—Անցեալ կիրակի գիշեր քանի մը բարեկամներ Տ. Վարդ Մանուչակի անուն սարեգածին առիւի իր սենեակը հաւաքուելով՝ պատիկ կերու խումբէ մը վերջ, \$7.05 հաւաքեցին որբերուն համար:

—Յիւստէֆիանէն մեզ կը գրեն թէ տեղւոյն Հայերը կը փախաբնին Հայ եկեղեցականներէն մին հրաւիրել հոն՝ պատարագելու և ժողովուրդը հոգեւորապէս միութարելու համար: «Երկու ամիսներ առաջ, կրտէ թըղթակիցն, Նիւ Եօքթի Բահանայն հրաւիրուեցաւ Պատկ մը ընելու համար, բայց անձնական տկարութեան պատճառաւ մերժեց: Ուստի պատկը կատարուեցաւ բողոքական Պատուելի մը կողմէն»:

—Տ. Գ. Տապաղեան, ընտանեօք ու զաւակներով, Նիւ Եօքթ հասաւ անցեալ շաբթու: Նոյնպէս Պատ. Ապօշի գաւազները, Բէրիմ և Յակոբ, որոնք, կը յիշեն ընթերցողք թէ, քանի մը ամիս առաջ ետ զրկուած էին Բասթըրկառանքէ, առանց դժուարութեան՝ յաղողեցան այս անգամ ազատ մուտք գտնել: Այս բոլոր նորեկները Ըսթերիկի գնացին:

—Պ. Տալրոսցի առանձին նամակով մը կը բողոքէ «Մշակի թղթակից Պ. Արմէնի գէմ, որ իր վերջի նամակին մէջ, Ամերիկայի Հայ Գրագարանները թուած ամեն, մոռցած էր յիշել Լինիլը. որ Ամերիկայի մէջ գոյութիւն ունեցող երկրորդ Հայ Գրագարանն է. և որ ունի 160 գիրք. և կ'ստանայ բոլոր ազգ. թերթերը»:

—Արծ. Մաշթոց Վարդապետ, Մարտ 14 թուակիր, մի ընդարձակ պաշտօնագիր կը գրէ մեզ, իր անցեալ ասի Ս. Փրկիչ եկեղեցոյ պարտուց բարձրան համարը ըրած հանգանակութեան մասին: Իմէջ այլոց ն. Արծ. կրտէ թէ «երբ \$3000 պարտքն ալ իսպառ ջնջենք, մտայ իր եմ եկեղեցոյ շինութեան պատմութիւնը առանձին կատարակել, հին և նոր նուիրատուաց ցանկին հետ մէկտեղը: Տ. Մաշթոց Վարդապետ անցեալ տարի հանգանակած է ընդ ամենին \$430.75 հետեւեալ քաղաքներէ. Պրայթթի \$55.50. Պոթթօն \$102.50. Չըլթի \$28.50. Մօլթըն \$108.75. Լօրէնս \$13.50. Հէվըրհի \$26.00. Յիւլպըրկէ \$71.50. Վայթնովիլ (Եկեղեցոյ գրքերուն համար) \$24.50: Այս ոտակները \$250ը պարտուց բարձրան համար գրամատան վճարուած է. մնացեալը տոկոսի և եկեղեցական առօրեայ ծախուց համար գոյացած պարտուց վճարուած է:

ԲԱՆԱՍՏԵՂՆԵՐԱՆՍ ԿԱՆԱՍՏԵՂՆԵՐ

ՅԱ.

Ի Ս Ս Ի Ր Ա Ս Ս

Ես կը սիրեմ Հայաստան տեսնել ազատ ու անկախ, Չը տեսնել հոն թուրքին ոտքը Բուրսին ձեռքը վատ խարդախ. Հայ Իշխանը կառավարէ Հայ երկիրը հարազատ, Մարդ հաւատար խօսք ունենայ, Լինի հարուստ թէ աղքատ: Ազատ հնչէ կոչանակի ձայնն Հայ ծերունոյ ականջին. Ազատ երգեն, ազատ գրեն Հայ աղջիկն ու պատանին: Հայ երախայն ազատ ննչէ, մեծնայ ազատ ու անվախ, Հայու լեզուն ու կրօնը պահուին յաւելտ անխարդախ: Հայ խմբագիրն ազատ գրէ իւր համոզումն անաջոտ, Վաս բռնութեան դէմ մաքառի, Թափէ գայրոյթ իւր արդար. Հայ գիւղացին ազատ հերկէ, ազատ հնձէ ամեն օր. Ազատ վայլէ միշտ արգիւնքը Թափած քրտանց բիւրաւոր: Փրօվիտէն, Ն. Մ. ԹԱԹԵՍՏԵԱՆ

ՌՈՒՍ ԱՉԵՂԱԿԱՆՍԵ ԴԱՍԱՍՏԱՆԸ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ

(Շարունակութիւն) Նոյն թերթին մէջ Փ. Ալիսօֆ ստորագրութեամբ նամակ մը հետեւեալ հասուածը կը պարունակէ. «Ահաբեկիչ կուսակցութեան գործած սոսկալի սխալը այն եղաւ որ, Մայիս 1ի իրենց յաղթութենէն վերջ պահ մը կասեցուցին շարունակական սեռորիզմը, պահ մը սուրբերին պատեանը դրին: Եթէ ամեն բան առաջուց պատրաստած ըլլային և Ար. Ե. Բաքալը Բ. ի թաղման օրն իսկ, Ռուսիոյ մէջ այս երկու բաներէն մէկը պիտի պատահէր. — կամ յեղափոխութիւն մը պիտի պայթէր, կամ ազատական սահմանադրութիւն մը պիտի հրատարակուէր»:

Ասոնցմէ զատ Պուրճէվի բնակարանին մէջ գտնուած է իր հեղինակած մէկ գիրքը, որուն մէջ մանրամասն նկարագրուած են Ռուսիոյ քաղաքական անցքերը: Ասկից ընդհանուր դատախազը կը հասեցնէր թէ յիշեալը մօտէն ճանչցած ըլլալու է այն յեղափոխականները՝ որոնց նմանիլ կը թեւադրէ իր ընթերցողներուն:

Լօրս Սօլթի, ամբաստանեալին փաստարանը, հետեւեալ կէտերու վրայ հիմնեց իր պաշտպանութիւնը:

— Իմ պաշտպանեալս, ըսաւ, չի ուրանար որ ինչորի նիւթ եղող գործարարներու հեղինակը ինքն է. բայց այն վերաբերուած՝ որուն ինք հանդիպած է Ռուս կառավարութեան կողմէն, լիովին կարողարացնէ իր գործածած գործարար լեզուն: Ինք տերութեան դրութիւնը պաշտպանած է միայն՝ իր միջոց ազատութիւն ձեռք բերելու համար, բայց միանգամայն յայտարարած է թէ ինք սաստիկ հակառակ է ազատ երկրի մը մէջ նոյն անբարեկամ միջոցներու կիրառութեանը: Դժուար է ազատ երկրի մը մէջ հասկնալ այն բուն ասկիութիւնը, որը Պուրճէվ կը սնուցանէ իր երկրի կառավարութեան դէմ: Անգլիոյ պէս ազատ երկրի մը քաղաքացիները պէտք է պահ մը ինք գրենքին Պուրճէվի գիրքին մէջ պատկերին և անոր ակնոցներովը գիտեն խորքը, որպէս զի կարենան հասկնալ թէ ինչպէս անիկա լրջօրէն և գիտակցաբար կը պաշտպանէր իր հանդէսին մէջ երեւցածներուն նման ծայրահեղ տեսութիւններ: Բայց Պուրճէվ ազատ երկրի մը մէջ ծնած ու ապրած չէր: Ինք զարգացած մարդ էր, համալսարանական մը: Ուսումնական յուզումի մը պատճառով, որուն մէջ սովայն քաղաքական հանգամանք մը չկար, կառավարութեան կասկածանքին ենթարկուեցաւ, մինչև այն ատեն իր երկրին մէկ հաւատարիմ քաղաքացին էր: Դժուարաւ պիտի հաւատար ինձի՝ եթէ ըսեմ թէ 3-400 անձեր, որոնցմէ մին էր ամբաստանեալը, ձեռքալուծեցան այդ չնչին պատճառով, և ինք ամբաստանեալը Բեքալուրի Ս. Պատրոս և Ս. Պողոսի բերդին բանտը նետուեցաւ: Չեմ գիտեր թէ դատաւորները կարողացած են երբէք Ռուսիոյ ներկայ կառավարութեան դրութիւնը նկարագրող գրութիւն մը: Բայց աշխարհի վրայ գտնուած գոյութիւններուն ամենէն ամենէն ահաբեկիչ դժոխքն էր այդ բերդը: Մարդեր այդ բանտը կը նետուին յանկարծական վարչական հրամանով մը: Ո՛չ հարցաքննութիւն, ո՛չ ամբաստանութիւն և ո՛չ դատաստան, և սուտիկանութեան կասկածանքին անմեղ զուգը ինքզինքը կը գտնէ շղթայապարկ, առանց գիտնալու իրեն վերագրուած յանցանքը:

(Շարունակելի) * * * * * ՇԱԲԱԹԱԿԱՆ ԲՐՈՒԿԻ Ահազ շաբթուայ և Չարսի բողոքականներու արարողութիւնները կատարուեցան անցեալ շաբթու: Հայրենիքի Չարսի երեկոյ թայու համար ամեն բան կար. մեծ ու մութ-կեկ ծամ մը. լուսազարդ խորան մը, խուսկի ծուխով պատած. դպրաց դաս մը. Տէրտէր մը. Պատարագիչ քարոզող Հայր Սուրբ մը. 1000ի չափ ժողովուրդ: Ուսթըրի մէջ ո՛չ միայն կարմիր հաւկիթ, այլ անոր համար հանդէս մըն ալ: Փրօվիտէն նոյն իսկ չափալ թագով Պատարագիչ մը կար: Մէկ բան կը պակէր... Հայրենիք մը: Հինգ շաբթի գիշեր Ռուսիոյ յի և Սաւարու մ'արարողութիւնները և Շարսի գիշեր ալ խիտ մի Պատարագը կատարուեցան: Չարսի Պատարագը Արծ. Տ. Սաղ Վարդապետը ըրաւ: 1000ի մօտ երկսեռ բազմութիւն մը լեցուցած էր եկեղեցին: Հայր Սուրբը քարոզէն վերջ ըսողներ եղան թէ՛ «միւսներէն աղէկ կը խօսի այս եկեղեցականը»: Վարդապետը կիրակի երեկոյ Աղատ Լուսարանի բեմին վրայ էր՝ քանի մը խօսք ըսելու համար: Աղէկ որ արատաւամարի Հայ եկեղեցականները իրենց տարալին մէջ փոփոխութիւն մտնուցած են. եթէ ոչ, երևակայեցէք Հայր սուրբը սեւ վերաբերուն մէջ պլուսած, վեղարը աչքերը դոցամ, Լուսարանի բեմին վրայ: * * * * * Երբէք չափազանցութիւն չէ ըսել թէ Նիւ Եօքթ Հայ գաղութին մէջ հանդէս մը արուած չէ այնքան օգտակար նպատակի մը համար որքան այն հանդէսը որ գալ Շարսի գիշեր պիտի արուի ի նպատակ անտէր որբերուն, որոնց մասին Սուլթանը ըսելիքը ըսած է արդէն. «Եթէ դուք չէք կրնար պահել ձեր որբերը, ևս կը պահեմ դանոնք»: Կը մնայ տեսնել թէ մենք այնքան անտարբեր պիտի ըլլա՞նք որ ձեռքը Համիտը պահպան գոյուր ըլլայ մեր 60.000 գառնուկներուն: * * * * * Այս գաղութը չը կրնար խնամել հազարաւոր որբերը. բայց վստահաբար առնուազն 100 որբեր կրնանք խնամել մեր գաղութի անուշով, եթէ ամեն մէկերնիս համազօրեմք թէ որբ մը մեծցնելը բարիք մըն է:

ՄԱՍՏԵՂՆԵՐԱՆՍ ԿԱՆԱՍՏԵՂՆԵՐ

Պ. Պ. Նիւ Եօքթ—Չարսի գաղութը կը գնահատենք, բայց վահէի գրածներուն կարեւորութիւն տալու չէ: Կը խնդրենք որ ուրիշ նիւթերու վրայ գրէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Ն. թ. Փրօվիտէն—Նոր վերադաձայ: Մարդիկը քիչ ատենէն կատանաք. նոյն ստանաւորը չուտով դրկեցէք:

Վ. Չ. Նիւ Եօքթ—Նոյն:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԲԱՅՅԻԻ

ՍԱՄՈՒԷԼ (Պատմական Վէպ)

Ա. Բ. և Գ. Գիրք


Գրին է § 1. 75

Իսկ «Դաւիթ-Բէկ» Հատոր Ա. Բ. և Գ. վերջնականով, և «Կայծեր» Հատոր Բ. լիակատար, լայն պիտի տեսնեն ներկայ տարւոյ ընթացքում, որոնց բաժանորդագրութիւնն շարունակուած է. երկու գրքի միասին բաժանորդագրին է՝ § 2½, իսկ լայն տեսնելուց յետոյ կ'արժենան § 3½: Ցանկացողները թէ՛ «Սամուէլ» և թէ՛ «Բաճաթի» միւս երկրի Համար, կարող են դիմել Հետեւեալ Հասցէին՝

Mme. Raffi 270 Uxbridge Road Shepherd's Bush, London W.

Վերջերս ոմանք որոշ գներէն աւելի սկսած են վաճառել այս գրքերը, իբր գրավաճառ իրենց շահը աւելցնելով անոնց վրայ:

Նիւ Եօրքի միակ ներկայացուցիչն է Տ. Մ. Թաշճեան, 251 Ուիլիամ Սթ. որ ստանց շահու կը վաճառէ Բաճաթի բոլոր գրքերը:



ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱԲԱՆ Գերբուրգ Տպագրութիւն Մաքսուէլ Սըմըրվել Հրատարակիչ

Կարողանայ 25 մեծագիր Հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն:

Սոցա գրին է Կտակեայ կազմ (2 տալ. 50 սէնթ) կէս կաշիակազմ է 71 " 50 " փառակազմ 100 "

Առաջին տնտեսին կը գրկուի անոնց որք յանձն կոտնեն յիշարկով ամիսը 2 տարարն) սէնթ և ներկորդին ամսով: արն է 3 ու կէս տարար, իսկ վերջինին 1 1/2 տարար:

Այս Համար իրատեսն Ամերիկեան միակ արտօնող տպագրութիւնն է: Մտնողը անկատար են ամեն կերպով: Մանրամասն թեանց Համար դիմել Սըմըրվել թեան:

ՃԻԼԻԼԸԱ ՀԵՅՆ ՎԱՃԱՌԱԿԱՆ Միասնորդ, առաջնակարգ սիկարի և Սիկարէթներու Թիւ 592 Յրդ Ալլիւ Երկեցեք ՏԻԳՐԻՍԸ Երբ գնէք

ԱՃԻ Ամէրիքը Որպէն Բո., Ստուիլ Նորվուք, Բոնն. առաջին կարգի Ուրպի գործաւորներ կ'ուզէ: Ընտանիքով եղողներն աւելի նախաձեռար կը Համարուին: Դիմել առ Կրիւպըր, 496 Պրուս փողոց, առաջին յարկ: Երկեցեք ըսել թէ ՏԻԳՐԻՍԸ մէջ կարգացիք այս ծանուցումն:

ԱՉԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Նկատելով որ Ամերիկայի մէջ, տեղական լեզուին անտեղեակ ազգայինք միշտ նեղութեանց կ'ենթարկուին, և և երբեմն կը կեղեքուին անվրասահելի թարգմաններէ, և նկատելով որ ազգային դորձակալութեան մը պէտքը գրաւի է այս բազմաթիւ գաղթականութեան մէջ, կուզանք ծանուցանել թէ՛ այսուհետեւ պատրաստ պիտի ըլլանք ստանձնել ամեն տեսակ գործերու յանձնարարութիւններ՝ նպատակաւ պայմաններով: Գործակալութիւնս Անգլիերէնի, Գերմաներէնի, Գողղիերէնի, Յունարէնի, Իտալերէնի, Տաճկերէնի և Արաբերէնի թարգմաններ կրնայ զրկել ամէն կողմ, և յանձնարարութիւններ ընդունել ուրիշ քաղաքներէ: Գնեմք խիստ գոհացուցիչ ու գերամատչելի են:

ՏԻԳՐԻՍԸ Վարչութիւն կ'երաշխատուի մեր գործակալութիւնն աւելն կերպով:

Մեզ գրել կամ դիմել Հետեւեալ Հասցէիւ:

Թիւ 242 Իսթ 42րդ Փողոց, Ն. Ե.

Հ Ի Բ Զ Օ Լ Ա ՄԱՋԻ ԴԵՂ



Կը գործանէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը: Միանգամ գործել բաւական է սաղեղին արժէքը գիտնալու Համար, 7ր արեւելեան խոտնէ պատրաստուած է յոյժ Հանելի մի Հոտով:

Կը ծախուի բոլոր գեղադործներուն քով:

Գրին 50 Մէնթ միայն: Կարելի է ստանալ նաև Հայկական գեղարանէն — Թիւ 472 Յրդ Ալլիւ, Նիւ Եօրք:

Դ. Պ Օ Ղ Ի Կ Ե Ա Ն Առաջնակարգ Հայ Սափրիչ 607 — Յրդ Ալլիւ, Սովորական գներ, մաքրութիւն և ուշագրութիւն:


ՀԱՅ ՀԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ 27 Նիւքմոն Փողոց, Պոսթրն, (Երկաթուղեգից կայարանին մօտ) Պոսթրնի առնէն աւելի յանախորդ ունեցող ճաշարանն է այս: Գիներն չափաւոր են. կերակուրներն Համեզ ու մաքուր: Պոստրնի կընդունուին Համեա շաքարավազաբով: կահաւորուած սենեակներ: Ճաշարանի մէջ Հաստատուած կայ նաև փուլ թէյակ:

Յ. ԹԱԳԱԳՃԱՆԵՆ ԵՒ Պ. ԵՐԱՐԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ Թիւ 242 Իսթ, 41րդ Փողոց Պատու ունին ծանուցանել թէ, այս նոր ճաշարանն բացած են սա վստահութեամբ միայն թէ մաքրութիւն և ընտիր խոհարարութիւն միշտ կը գնահատուի Հասարակութեան կողմէ:

Միանգամ փորձին բաւական է մըլ արնջնական յաճախորդ ըլլալու:

ՊԱԿԱՍ ՄԸ ՄԵՐ ՄԷՋ Կենաց ապահովագրութեան ամենալուստեղի Ընկերութիւն մը կը ներկայացնէ Աղլը. Թ. Տարագճեան: Պայմանք դիւրամատչելի են: Լիւրի բացատրութիւնք Հաճութեամբ կը տրուին փափաքողաց: Հասցէ՝ 77 Ուէսթ 11րդ փողոց, Նիւ Եօրք:

Ա. Թ Օ Փ Ո Ւ Չ Ե Ա Ն 239 Իսթ, 26րդ Փողոց, Ն. Ե. Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ճ Ա Ռ ԵՒ Կ Օ Շ Կ Ա Կ Ա Ր



Ամառուայ ամեն տեսակ կոշիկներ (արանց, կանանց, աղայոց և աղջկանց) կը վաճառենք խիստ աժան գներով: Արանց կոշիկներ § 1.25 էն 5.00 Կանանց « « 1.25 « 2.50 Տղայոց և Աղջկանց, 50 « 1.50 Նոր ապարուած կոշիկներ կը կարենք ձևաւոր և վայելուչ կերպով, և կը նորոգենք ամեն կարգի կոշիկներ շատ աժան գներով:

Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ճ Ա Ռ ՊՕՂՈՍ Մ. ԳՈՒՅՈՒՄՃԱՆ 23 Կրին Փողոց, Ուսթըր Մասս

Ուրիշ տեղ մի նայիք կոշիկի Համար, մեր քով կը գտնեն ճաշակիղ յարմար:

Պատու ունիմ յայտարարելու արդայ Ազգայնոց որ Զատիկուայ առթիւ ամեն կարգի կոշիկներ պատասխան եմ, (արանց, կանանց, աղայոց և աղջկանց) Համար:

98ր վերջին մօտային գեղեցկագոյն կոշիկներ: Նմանք կրէք չ'ընուած գներով:

Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ճ Ա Ռ Ա Մ Ե Ն Բ Ս Ր Ո Ւ Ն Ա Կ Ե Ա Ն 7 4 4 Յրդ. Ալլիւ. (39 և 40րդ. փող.) Նոր առաջին կարգի կոշիկներ: Հիները ուշագրութեամբ կը նորոգենք: Հայերուն մասնաւոր գեղջ:

ՅԱԿՈՒ ԲԱՐԱԿԵԱՆ Ամերիկեան և Արեւելեան Նպարավաճառ: Թիւ 45 Էքսթրէմ Սթ. Ուսթըր կը ծանուցանէ թէ գներու չափաւորութեան և նպարեղէններու ընտիր տեսակի մասին կը գերազանց ուրիշ նպարավաճառներն: Այնթապի Հալուէ, լրիւսմ, ձիթապտուղ և Տիւրքանակերտի շարապի Հարկը:


Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Յ. ՉԱԼՈՒՄ ԵՒ ՈՐԴԻԲ Ն Ե Ր Ա Մ Ո Ղ ԹՐԲԱԿԱՆ ԱՊՐԱՆԱՅ

Պատու ունիմք ծանուցանել արդայ Հայ Հասարակութեան թէ վերոյիշեալ խանութի մէջ կը վաճառենք Շամու, Մըլըրի և Թուրքիոյ ամեն տեսակ ապրանքներ, զօրօրինակ պուլըրուր, ծեծած, լրիւսմ, Հալվա, խահալէի տէյրման և ճէզվէ, ներկիլէ, թէմպէքի, Հայոց աղայոյն հիւանդանոցի սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ նպարներ ու անուշեղէններ որ չենք կրնար բոլորն ալ յիշել Հոս: Նաև ունինք ամեն տեսակ պահարեղէններ:


Խիստ աժան գներ: Փորձեցէք: ՉԱԼՈՒՄ ԵՒ ՈՐԴԻԲ 73, Ուաշինգթոն Փողոց.

ԻՊՐԱՀԻՄ ԱՊԼԱՀԱԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ Մեր այս նոր ճաշարանի մէջ պատրաստ կը գտնուին խիստ մաքուր կերակուրներ, խորտիկներ և անուշեղէններ:

Գինը չափաւոր, մաքրութիւնն նշանակելի: Մեր շէնքի մէջ ունինք նաև բազանիք և վարձու կահաւորուած սենեակներ: 407 Սթէֆէնսըն Սթ. Ուէսթ Զօպօքն



Գարնան Համար մեր ստացած տեղական և Եւրոպական նոր ապրանքներն անկարելի է գնի մասին մըրցման ենթարկել ուրիշներու Հետ: Մեր երկար փորձառութիւնն ու արհեստին մէջ ունեցած Հմտութիւնն ապրանքներու տեսակին Հետ միացած կ'երաշխատեն այնպիսի Հազուատներ, որք չեն կրնար գերազանցուիլ: Փորձ մը բաւական է գրեզ Համոզելու Համար: Հայ յաճախորդներէն եղած շահու Հարիւրին ստոր պիտի յատկանայ Բարեգործական Ընկերութեան: Ուրիշներու երթալէ առաջ շահուր է նախ դիմել մեզ: Կը ծախուի նաև ստալին կարգի Հ.Ն.Լ. խոտիկներ: շափար որ գներով:



Ս. Ս. Ղ Ո Ւ Մ Ր Ի Կ Ե Ա Ն Թիւ 628 Յրդ. Ալլիւ, Նիւ Եօրք



Հաստատեալ 1854 ՅԱԿՈՒ Ե. ԽԷՐԳԷԿԵԱՆ (Ներկայացուցիչ) ՈՒԼԻԻՐՄ. Գ. ԲԷՕՂԼԸՐ ԵՒ ԵՂԲԱՐՃ, Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Բ Գրին, Օղի, ողջից Ըմպիեաց Ե Թիւ 202, 204 Իսթ 29րդ Փողոց, Նիւ Եօրք, Ն. Ե.

Պատու ունիմ ծանուցանել արդայ Հասարակութեան թէ իւր վաճառած ըմպիլիքներն ոչ՝ միայն փորձեալ և անխաղախ են, այլ և դիւրամատչելի են ամէն գրասակարգի անձանց:

Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Բայի-Փորնիսի և տաճկական ամէն տեսակ ուրաքի, օղի, գինի, շամբանիս, մասթիքայ, գարնուր, պրանտի, ափսիսի և այլն, իրենց ամեն տեսակներով: Փափաքողաց գներու ցուցակը չ'զրկուի առանց ո՛ր է ծախքի:

Յանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշգրութեամբ եւ փութով: Բաղաքին մէջ ապրանքներն ձրի կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս զրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է:

Ըմպիլիքներ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօլմէյլ անտրիթէյլ)

Մեր յաճախորդքը երբ չի Հաւնին իրենց գնած ըմպիլիքներուն, յանձն կոտնենք զայնս փոխել, եթէ պակասած ու փառուած չ'ըլլան:

Ըմպիլիքներ կը վաճառուին շիշով, կայրով, տակառով և յատուկ անտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր: Դիմել յիւ եալ Հասցէին կամ Ե. Խ. ԽԷՐԳԷԿԵԱՆ, 535 Ուէսթ 57րդ Փողոց, Ն. Ե.